ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2025 թվականի N 660-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Գրիգոր Գասպարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Շենիկ գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի՝ Գրիգոր Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /կադաստրային ծածկագիր 04-080-0004-0002/ տալ <<Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գյուղ Շենիկ, Պ.Սևակի փողոց, 25 բնակելի տուն>> հասցեն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025թվականի սեպտեմբերի 22
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 661-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Արփինե Էդիկի Սահակյանի 2025 թվականի օգոստոսի 05-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Արփինե Էդիկի Սահակյանին, տալ նախագծման թույլտվություն(ճարտարապետահատակագծային առաջադրանք) - Արփինե Էդիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք Տալվորիկ բնակավայրում /կադաստրային ծածկագիր՝ 04-091-0180-0002, վկայական՝ N24032025-04-0017/, 48քմ գյուղմթերքների վերամշակման և պահեստավորման տարածքի կառուցման աշխատանքներ կատարելու համար:
2. Արփինե Էդիկի Սահակյանը, պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Արփինե Էդիկի Սահակյանը, պարտավոր է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության Բաղրամյան համայնքի 900475054095 հաշվեհամարին վճարել 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ նախագծման թույլտվություն տրամադրելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025թվականի սեպտեմբերի 23

գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 662-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Սամվել Հրայրի Սարգսյանի 2025 թվականի օգոստոսի 29-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Սամվել Հրայրի Սարգսյանին, տալ նախագծման թույլտվություն(ճարտարապետահատակագծային առաջադրանք) - Սամվել Հրայրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք Վանանդ բնակավայր Երևանյան խճուղի 1 /կադաստրային ծածկագիր՝ 04-089-0101-0002, վկայական՝ N10022023-04-0101/, 4000խմ ծավալի ջրավազանի կառուցման աշխատանքներ կատարելու համար:
2. Սամվել Հրայրի Սարգսյանը, պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3. Սամվել Հրայրի Սարգսյանը, պարտավոր է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության Բաղրամյան համայնքի 900475054095 հաշվեհամարին վճարել 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ նախագծման թույլտվություն տրամադրելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025թվականի սեպտեմբերի 23

գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 663-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-25/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունով և 26-րդ կետի 1-ին ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանի կարիքների համար՝ դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով ստեղծել ԱՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-25/14 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 23
գ. Բաղրամյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ղեկավարի
2025 թվականի սեպտեմբերի 23-ի
N 663-Ա որոշման

ԿԱՋՄ

ԱՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-25/14 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝	Միեր Հարթենյան
Հանձնաժողովի անդամներ՝	Հովնան Ավետիսյան
	Ալավերդի Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Զարինե Մկրտումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 664-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 384-Ն որոշման պահանջներով.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում քաղաքացիական պաշտպանության արդյունավետ կազմակերպման նպատակով ստեղծել և հաստատել քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմը՝ համաձայն հավելված N1:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N2:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N3:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N4:
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N5:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N6:

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N7:

8. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N8:

9. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N9:

10. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պլանը՝ համաձայն հավելված N10:

11. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության պլանը՝ համաձայն հավելված N11:

12.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության պլանը՝ համաձայն հավելված N12:

13. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայության պլանը՝ համաձայն հավելված N13:

14. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայության պլանը՝ համաձայն հավելված N14:

15. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պլանը՝ համաձայն հավելված N15:

16.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության պլանը՝ համաձայն հավելված N16:

17.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայության պլանը՝ համաձայն հավելված N17:

18. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թվականի սեպտեմբերի 23
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 665-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 24-րդ կետի բ) ենթակետով և 3-րդ կետով և հաշվի առնելով Կիմա Անդրանիկի Տոնոյանի 2025 թվականի մարտի 04-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Ս. Շահումյան փողոց 6/4 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Կիմա Անդրանիկի Տոնոյանին /ծնված 07/09/1942 թ./ պատկանող 0,00587 հա / կադաստրային ծածկագիր 04-036-0010-0028-ից/ բնակավայրերի նպատակային նշանակության, այլ կառուցապատման գործառնական նշանակության հողը համարել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման:
2. Փոփոխված 0,00587 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանումում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 23
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2025 թվականի N 666-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 24-րդ կետի բ) ենթակետով և 3-րդ կետով և հաշվի առնելով Կիմա Անդրանիկի Տոնոյանի 2025 թվականի մարտի 04-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Ս. Շահումյան փողոց 6/5 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Կիմա Անդրանիկի Տոնոյանին /ծնված 07/09/1942 թ./ պատկանող 0,00654 հա / կադաստրային ծածկագիր 04-036-0010-0028-ից/ բնակավայրերի նպատակային նշանակության, այլ կառուցապատման գործառնական նշանակության հողը համարել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման:
2. Փոփոխված 0,00654 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանումում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 23
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2025 թվականի N 667-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Անուշ Հայրապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Բաղրամյան գյուղի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի՝ Անուշ Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /կադաստրային ծածկագիր 04-029-0009-0036/ տալ <<Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գյուղ Բաղրամյան, Պ.Սևակի փողոց, 23 կիսակառույց>> հասցեն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2025թվականի սեպտեմբերի 24
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2025 թվականի N 668-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-036-0010-0028-ԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԻՄԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՏՈՆՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Ս. Շահումյան փողոց 6/4 հասցեավորմամբ բնակավայրերի այլ կառուցապատման նշանակության հողամասում 1982 թվականին ինքնակամ կառուցվել է խորդանոց, որին մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի Կիմա Անդրանիկի Տոնոյանը (ծնված՝ 07/09/1942 թվական), ով 2025 թվականի մարտի 04-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ կառուցապատման գործառնական նշանակության 0,00587 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված խորդանոցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ

կառույց հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024SWGAW2 ծածկագրով, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգ»-ի 2-րդ, 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգ»-ի 33-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Ս. Շահումյան փողոց 6/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ կառուցապատման գործառնական նշանակության՝ 04-036-0010-0028-ից կադաստրային ծածկագրով 0,00587 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված՝ 23,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով խորդանոցը ճանաչել օրինական, դրանք համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփականությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացնող անձ Կիմա Անդրանիկի Տոնոյանին:
3. Օրինականացված անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 24
գ. Բաղրամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2025 թվականի N 669-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 04-036-0010-0028-ԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԻՄԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՏՈՆՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԹՌՉՆԱՆՈՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Ս. Շահումյան փողոց 6/5 հասցեավորմամբ բնակավայրերի այլ կառուցապատման նշանակության հողամասում 1983 թվականին ինքնակամ կառուցվել է թռչնանոցը, որին մինչ օրս տիրապետում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի Կիմա Անդրանիկի Տոնոյանը (ծնված՝ 07/09/1942 թվական), ով 2025 թվականի մարտի 04-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարան դիմում է ներկայացրել ինքնակամ կառույցն օրինականացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ կառուցապատման գործառնական նշանակության 0,00654 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված թռչնանոցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, որպես ինքնակամ

կառույց հաշվառված է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024TPEAK5 ծածկագրով, չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կամ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգ»-ի 2-րդ, 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգ»-ի 33-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Ս. Շահումյան փողոց 6/5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ կառուցապատման գործառնական նշանակության՝ 04-036-0010-0028-ից կադաստրային ծածկագրով 0,00654 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված՝ 14.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով թռչնանոցը ճանաչել օրինական, դրանք համարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփականությունը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացնող անձ Կիմա Անդրանիկի Տոնոյանին:
3. Օրինականացված անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Շ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 24
գ. Բաղրամյան